ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

торами регионального развития - как особенности новой экономики. В этом смысле регионы имеют приоритеты, поскольку им предоставляется возможность проводить инновации, связанные с экологией, сельским хозяйством, муниципалитетом, экотуризмом и агротуризмом. Инновации могут быть связаны с участием общественности по местным вопросам, а также с визуализацией ресурсов для содействия оптимальному принятию решений. В этом контексте в статье обсуждаются два направления: (1) инвестирование принципов сети с помощью приложения смартфонов, веб-сайты и блоги и (2) применение геоинформационных систем (ГИС) для картографирования и анализа расширенных муниципалитетов или в другом регионе, чтобы повысить оптимальное принятие решений.

SOS KHACHIKYAN

THE FEATURES OF REGIONAL PLANNING AND DEVELOPMENT OF THE RA THROUGH TECHNOLOGY TOOLS

Key words: *regional planning, development, technology, innovation, public participatory, decision making*

In recent conditions of development the regional policy should be based on scientific-technological modern tools. The digital solutions, scientific and research evolutions, social and human capital should be contemporary factors for regional development – as features of new economy. In this sense the regions have priorities, as they are given the opportunity to carry innovations related to ecology, agriculture, community, ecotourism and agro-tourism. The innovations could be related to public participatory in local issues, as well as resources visualization to assist optimal decision making. In this context two directions are discussed in the article: (1) the investment of networking principles through smart phone applications, web sites and blogs, and (2) the application of geo-information systems (GIS) for mapping and analyzing consolidated communities or other region, in order to increase optimal decision making.

ԱՍՏՂԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կրտսեր հետազոտող

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. *արտագաղթ, արտագաղթին նպաստող գործոններ, որակավորմանը համապատասխան աշխատանք, եկամտի մակարդակ, կոռելյացիայի գործակից, միգրացիոն քարտ*

Հոդվածում ուսումնասիրվել են միգրանտների մասին տեղեկատվության հավաքագրման առկա աղբյուրները, վեր են հանվել դրանց թերությունները, և կարևորվել է միգրացիայի վարչական տեղեկատվական ամբողջացված աղբյուրների ստեղծման անհրա-

ժեշտությունը: Առաջարկվել է սահմանային անցման կետերում ներդնել միգրացիոն քարտերի թվային համակարգ՝ ՄԱԿ-ի սահմանումներին համապատասխան միգրանտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Ուսումնասիրվել է նաև որակավորմանը համապատասխան աշխատանք չունենալու և եկամտի տարբեր մակարդակների ազդեցությունը ՀՀ-ից արտագաղթողների թվաքանակի վրա:

Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ներկայիս գերխնդիրն արտագաղթն է: Չնայած դրան՝ ՀՀ-ից արտագաղթող քաղաքացիների վերաբերյալ ստույգ տեղեկատվությունը բացակայում է, քանի որ ՀՀ-ում դեռևս ձևավորված չեն միգրացիայի վարչական տեղեկատվական ամբողջացված աղբյուրներ: Միգրանտների թվաքանակի, գտնվելու վայրի և մեկնելու պատճառների վերաբերյալ համակարգված տեղեկատվություն չի հավաքագրվում: ՀՀ-ում առկա սահմանային էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով տեղեկություններ են ստացվում սահմանահատումների և դրանց մասնակիցների վարչական գրանցումների (քաղաքացիության) վերաբերյալ, սակայն համակարգը հնարավորություն չի ընձեռում այդ տեղեկությունները մշակել՝ ՄԱԿ-ի սահմանումներին համապատասխան միգրանտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Ուստի ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը տիրապետում է սահմանահատումների, բայց ոչ միգրանտների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության:

ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում տարվող բարեփոխումները կոչված են բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության շարունակական բարձրացմանը: Ուստի երկարաժամկետում բնակչության բարեկացության ավելացմանը հասնելու համար ՀՀ 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀԶՌԾ) հիմնական նպատակ է սահմանվել զբաղվածության ընդլայնումը՝ որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով:

Վերլուծենք ՀՀ-ից արտագաղթի մեջ որակավորումից ցածր զբաղվածության և եկամտի մակարդակի դերը:

ՀՀ տնային տնտեսությունների անդամների 16.6%-ը կատարում է որակավորումից ցածր աշխատանք[1]: Որակավորմանը համապատասխան աշխատանք չունենալը արտագաղթը խթանող գործոն է, քանի որ աշխատելու նպատակով արտերկիր մեկնելու և որակավորմանը համապատասխան աշխատանք չունեցող անձանց թվաքանակի միջև կապն ուժգին է: Հաշվարկված կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.6:

Աշխատանք փնտրելու նպատակով արտերկիր մեկնելու պատրաստ անձանց թվաքանակի և նրանց եկամտի միջև կապն արտահայտող կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.99: Ըստ ստացված շատ ուժգին կապի՝ կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր եկամտային խմբում, անձանց թվաքանակի ավելացմանը զուգընթաց, անշեղորեն ավելա-

[1] «ՀՀ մարզերում զբաղված բնակչության անհամաչափ բաշխվածությունն ըստ որակավորման» վերլուծական ակնարկ, էջ 1, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, http://media.asue.am/upload/amberd/verlucakanner-/Hovhannisyan_Astxik.pdf:

նում է նաև աշխատելու նպատակով արտերկիր մեկնելու ցանկություն ունեցողների թիվը: Սա, ցավոք, վկայում է, որ մարդիկ պարզապես ցանկանում են արտագաղթել՝ անկախ իրենց եկամտի ներկայիս մակարդակի:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից, արտերկրում աշխատել ցանկացող քաղաքացիների թվաքանակը գերակշռում է մայրաքաղաք Երևանում: Երևանի բնակչության 34%-ը վստահորեն պատրաստ է մեկնել արտերկիր: Ամենացածր ցուցանիշը Սյունիքի մարզում է՝ 3.4%: Այս ցուցանիշը միանգամայն բացատրվում է աշխատանքի և որակավորման համապատասխանության և արտագաղթի միջև հաշվարկված կապի ուժգնությամբ: Սյունիքը միակ մարզն է, որտեղ զբաղվածների 52%-ը կատարում է որակավորումից բարձր աշխատանք, մինչդեռ ՀՀ մյուս բոլոր մարզերում որակավորումից բարձր աշխատանք ունեցողները առավելագույնը 0.1%-0.2%[1] են: Հետևաբար՝ Սյունիքում զբաղվածները չեն ցանկանա այլ աշխատանք փնտրել, մասնավորապես՝ արտերկրում:

Ենթադրաբար, հարմար առիթի դեպքում արտերկիր կմեկնեն նաև ցանկացած այլ վայրում աշխատելու պատրաստ անձինք, ինչպես նաև նրանք, ովքեր դժվարացել են պատասխանել՝ կմեկնեն, թե՝ ոչ: Ուստի ստացվում է, որ ՀՀ քաղաքացիների միջինում 35%-ը մտածում է արտերկրում աշխատելու մասին, այդ թվում՝ Գեղարքունիքի մարզի բնակչության 63%-ը, Երևանի և Արարատի մարզի բնակչության 48-ական %-ը:



Գծապատկեր 1. ***Աշխատանք (ավելի լավ աշխատանք) գտնելու նպատակով արտերկիր մեկնելու պատրաստ անձանց կշիռը (տոկոս)***

Ներկա դրությամբ միգրանտների թվաքանակի, մեկնելու պատճառների, արտերկրում նրանց մնալու տևողության մասին տեղեկատվության հիմնականաղբյուրըԱզգային

[1] ՀՀ մարզերում զբաղված բնակչության անհամաչափ բաշխվածությունն ըստ որակավորման վերլուծական ակնարկ, էջ 1, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, http://media.asue.am/upload/amberd /verlucakanner /Hovhannisyan_Astxik.pdf:

վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից կատարվող ամենամյա ընտրանքային հետազոտությունն է[1]:

Ըստ տվյալ հետազոտության արդյունքների՝ 2012–2015 թթ. ՌԴ և այլ երկրներ մեկնած անձանց մեծամասնության համար մեկնելու հիմնական պատճառ եղել են աշխատելը և աշխատանք փնտրելը, այդ թվում՝ սեզոնային:

Հետազոտության արդյունքում առանձնացվել են միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2015 թ. դրությամբ մեկնումներից վերադարձած և չվերադարձած անձինք:

Մեկնումներից վերադարձած անձանց 25.2%-ի բացակայության տևողությունը կազմել է մեկ տարի և ավելի: Իսկ մնացած 74.8%-ի բացակայության տևողությունը եղել է մինչև 1 տարի: Սակայն, վերջիններիցս 4-11 ամսով բացակայածների 74.6%-ը և մինչև 3 ամսով բացակայածների 30.2%-ը մեկնել են արտերկիր աշխատելու նպատակով, ուստի նրանք եղել են աշխատանքային միգրանտներ:

Մեկնումներից չվերադարձած անձանց 37.2%-ի բացակայության տևողությունը կազմել է մեկ տարի և ավելի, իսկ մնացած 62.8%-ինը՝ մինչև 1 տարի: Սակայն, նրանց 78.0%-ը ևս աշխատանքային միգրանտներ են:

Տվյալ հետազոտության արդյունքները, սակայն, որոշ դեպքերում ունեն ցածր կամ ոչ բավարար ներկայացուցչականություն և կիրառելիության սահմանափակումներ՝ հետևյալ հանգամանքներով պայմանավորված[2].

- Ընտրանքի սահմանափակ չափի պատճառով համեմատաբար քիչ տարածում ունեցող երևույթներն օբյեկտիվորեն ունեն ընտրանքում ընդգրկվելու փոքր հավանականություն, ինչի հետևանքով մանրամասնեցման բարձր աստիճան ունեցող տվյալները կարող են ունենալ ոչ բավարար ներկայացուցչականություն:
- Ընտրանքի կիրառվող մեթոդը լիարժեք հնարավորություն չի ընձեռում նաև ապահովելու տնտեսական գործունեության կամ զբաղմունքի բոլոր տեսակների համարժեք ընդգրկվածություն, քանի որ ընտրանքը ստրատիֆիկացված չէ ըստ այդ փոփոխականների (օրինակ՝ թե ՀՀ յուրաքանչյուր մարզից տարբեր մասնագիտություններ և կրթական աստիճան ունեցող մարդկանց քանի տոկոսն է արտագաղթում և այլն):

Հաշվի առնելով տվյալ հետազոտության թերությունները, միաժամանակ, միգրացիոն խնդիրների սրությունը՝ գտնում ենք, որ ՀՀ-ում անհրաժեշտ են միգրացիայի վերաբերյալ համակարգված տեղեկատվության աղբյուրներ: Ըստ մի շարք երկրներում ներդրված համակարգի՝ ուղևորները տվյալ երկիր մուտքի և ելքի ժամանակ սահմանային անցման կետերում լրացնում են միգրացիոն քարտեր: Միգրացիոն քարտը, սովորաբար, բաղկացած է 2 մասից՝ ժամանման քարտ (arrival card) և մեկնման քարտ (departure card,

---

[1] Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքները տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցում, Երևան-2016, մաս 1, էջ 23-27, http://armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf:

[2] «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 7:

outgoing passenger card or embarkation card): Երկրից մեկնելու դեպքում ուղևորը, սովորաբար, նշում է իր զբաղմունքը, ուղևորության հիմնական նպատակը (հանգիստ, ուսում, աշխատանք և այլն), մնալու տևողությունը, ուղղությունը (հաջորդ կանգառը), հասցեն տվյալ երկրում: Նման քարտերը կարող են նախատեսված լինել և՛ տվյալ երկրի քաղաքացիների, և՛ օտարերկրացիների, միայն տվյալ երկրի քաղաքացիների կամ միայն օտարերկրացիների համար՝ ելնելով տվյալ երկրում դրանց ներդրման նպատակից: Եվ ելնելով համակարգի զարգացումից և արդյունավետության բարձրացումից՝ որոշ երկրներում այն թվայնացվել է: Նման համակարգով են աշխատում ԱՄՆ-ն, Չինաստանը, ՌԴ-ն, Հարավարևելյան Ասիայի ժողովուրդների ասոցիացիայի անդամ երկրները, Ավստրալիան, Հնդկաստանը, Բելառուսը, Ուկրաինան և այլ երկրներ:

Գտնում ենք, որ ՀՀ-ում տվյալ համակարգի ներդրումը կլուծի մի շարք խնդիրներ, և մանրամասն ու ավելի ստույգ տեղեկատվություն կլինի միգրանտների թվաքանակի, նրանց որակավորման, մեկնելու նպատակի, ուղղությունների, մնալու տևողության մասին, քան ընտրանքային հետազոտության արդյունքներն են: Ստացված տեղեկատվությունը հուսալի հիմք կծառայի նշված ոլորտներում բարեփոխումների ու պետական արդյունավետ քաղաքականության մշակման համար:

Իհարկե, կա ռիսկ, որ անձը կարող է հավաստի տեղեկատվություն չտալ մեկնելու նպատակի մասին (որպեսզի իրավական պատասխանատվության չենթարկվի անօրինական աշխատանք կատարելու համար կամ գուցե վստահ չէ, որ կգտնի աշխատանք): Այս դեպքում, եթե միգրացիոն քարտի «մեկնելու նպատակ» բաժնում որպես այլընտրանքային տարբերակներ լինեն «աշխատելը» և «աշխատանք փնտրելը», ապա երկրորդ տարբերակը նշելու դեպքում քաղաքացին կազատվի պատասխանատվության ենթարկվելու ռիսկից, իսկ պատկերը որոշակի առումով արդեն պարզ կդառնա:

Փաստացի, ՀՀ սահմանային անցման կետերում ուղևորներին բանավոր կերպով հարցնում են ուղևորության նպատակի մասին: Ուստի անհրաժեշտ է միայն գրանցել ստացված տեղեկատվությունը: Կարծում ենք, որ ՀՀ-ում արդյունավետ կլինի տվյալ համակարգի թվայնացված ներդրումը, երբ սահմանապահն ինքը գրանցի ուղևորի պատասխանը՝ այդպիսով լրացուցիչ ջանքեր չծախսելով և անտեղի խուճապի չմատնելով ուղևորին:

Այս մեթոդը տարիներ շարունակ գործում է շատ երկրներում, և հուսանք, դրա ներդրումը ՀՀ-ում ևս կտա դրական արդյունք:

АСТХИК ОГАНЕСЯН

ЗАНЯТОСТЬ И ПРОБЛЕМЫ РЕГИОНАЛЬНОЙ ЭМИГРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *эмиграция, факторы, способствующие эмиграции, работа, соответствующая квалификации, уровень дохода, коэффициент корреляции, миграционная карта*

В статье рассмотрены существующие источники информации о мигрантах, выявлены их недостатки и необходимость обобщенной системы информационных источников миграции. Было предложено ввести цифровую систему миграционных карт в пунктах пересечения границы для сбора информации о мигрантах, соответствующей определениям ООН. Также изучалось влияние различных уровней дохода и занятых работой ниже своей квалификации числа работников на число эмигрантов из Армении.

ASTGHIK HOVHANNISYAN

EMPLOYMENT AND ISSUES OF REGIONAL EMIGRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *emigration, factors contributing to emigration, qualification relevant work, income level, correlation coefficient, migration card*

The article has examined existing sources of information on migrants, their shortcomings have been revealed and the need for integrated sources of administrative information on migration has been highlighted. A suggestion has been made to invest a digital system of migration cards at border crossing points for getting information on migrants meeting the UN definitions. The impact of the quantity of employed in jobs lower than their qualificationand different levels of income on the number of emigrants from Armenia has also been studied.

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *ՀՆԱ, ազգային տնտեսություն, արտահանում, ներմուծում, զուտ արտահանում, արտահանման հակվածություն, ներմուծման հակվածություն, տնտեսական աճ*

Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ՀՆԱ արտաքին առևտրի արդի զարգացումները (արտահանման և ներմուծման արդյունքներով) և համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ) 2011–2016 թթ.: Ինչպես ՀՀ-ի, այնպես էլ ԱՀ-ի համար ՀԱԳ-երը ունեցել են դրական զարգացումներ. ՀՀ-ում 2011 թ. այն կազմել է -0.545, 2016 թ.՝ -0.520, իսկ ԱՀ-ում համապատասխանաբար՝ -0.513 և -0.297: ՀՀ-ի և ԱՀ-ի միջև արտաքին համատեղ առևտրի կառուցվածքում ԱՀ բաժինը արտահանման մեջ կազմել է 2011 թ.՝ 1.6%, ներմուծումը՝ 5.1%, իսկ